ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5-Ա

14 մարտի 2019 թվական Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ՄԱՐՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 14-ի թիվ 2 նիստի օրակարգը:

Նիստի օրակարգը

1 Հաղորդում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի սելավատար առուների մաքրման աշխատանքների վերաբերյալ.
Զեկուցող համայնքի ղեկավար՝ Երվանդ Հակոբյան

2 Հաղորդում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքում իրականացվող գարնան գյուղատնտեսական աշխատանքների վերաբերյալ.
Զեկուցող համայնքի ղեկավար՝ Երվանդ Հակոբյան

3 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անուշավանի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և տնօրեն նշանակելու մասին
Զեկուցող համայնքի ղեկավար՝ Երվանդ Հակոբյան

4 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխաների ծնողական վարձավճարի 2019թվականի դրույքաչափը սահմանելու և 2018թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 69-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
Զեկուցող համայնքի ղեկավար՝ Երվանդ Հակոբյան

5 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, դիմումների համաձայն, դրամական օգնություն տրամադրելու մասին.
Զեկուցող համայնքի ղեկավար՝ Երվանդ Հակոբյան

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան գյուղի բնակիչներին գույքահարկի և հողի հարկի զիջման մասին.

Զեկուցող համայնքի ղեկավար՝ Երվանդ Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

		Կողմ-5	Դեմ-0	Ձեռնպահ-0
Աշոտ Կարոյան	կողմ	----------	----------	----------
Ռաֆիկ Հարությունյան	կողմ	----------	----------	----------
Անդրանիկ Վարդանյան	կողմ	----------	----------	----------
Գնել Վարդանյան	կողմ	----------	----------	----------
Արմեն Տեփանոսյան	կողմ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲՅԱՆ

«14» մարտի 2019 թվական
Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 6-Ա

14 մարտի 2019 թվական Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ և ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետով, 65-րդ հոդվածի 1, 2 կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15, 16 և 28-րդ կետերի դրույթներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի դեկտեմբերի 13-ի N2145-Ն որոշման թիվ 2 հավելվածի դրույթները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ղեկավարի 2019թվականի մարտի 6-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անուշավանի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 16/1-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ղեկավարի 2019թվականի մարտի 6-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անուշավանի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 16/1-Ա որոշումը:
2. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անուշավանի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անուշավանի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն սույն որոշման թիվ 1 հավելվածի:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անուշավանի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացվող անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմն ու արժեքը և փոխանցման ակտը համաձայն սույն որոշման 2-րդ հավելվածի:
5. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անուշավանի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու Մանիկ Վարդանյանին /անձնագիր AH 0284106, տրված 25.11.2006թ. 028-ի կողմից, հաշվառման վայրը ք. Երևան 1գ. շ. 8/1, բն. 40 /:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

		Կողմ-5	Դեմ-0	Ձեռնպահ-0
Աշոտ Կարոյան	կողմ	----------	----------	----------
Ռաֆիկ Հարությունյան	կողմ	----------	----------	----------
Անդրանիկ Վարդանյան	կողմ	----------	----------	----------
Գնել Վարդանյան	կողմ	----------	----------	----------
Արմեն Տեփանոսյան	կողմ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲՅԱՆ

«14» մարտի 2019 թվական
Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7-Ա

14 մարտի 2019թվական

Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 69-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ հաճախողերեխաների 2019թվականի ծնողական վարձավճարի ամսեկան դրույքաչափ սահմանել՝ Անուշավան համայնքի երեխաների համար 4000 /չորս հազար/ դրամ, իսկ այլ համայնքներից հաճախող երեխաների համար 5000 /հինգ հազար/ դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Անուշավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող երեխաների 2019թվականի ծնողական վարձավճարի ամսեկան դրույքաչափը սահմանելու մասին>> թիվ 69-Ա որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

		Կողմ-5	Դեմ-0	Ձեռնպահ-0
Աշոտ Կարոյան	կողմ			
Ռաֆիկ Հարությունյան	կողմ			
Անդրանիկ Վարդանյան	կողմ			
Գնել Վարդանյան	կողմ			
Արմեն Տեփանոսյան	կողմ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲՅԱՆ

«14» մարտի 2019 թվական
Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8-Ա

14 Մարտի 2019թվական Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5 -րդ կետի դրույթով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, դիմումների համաձայն, Անուշավանի համայնքային բյուջեից հատկացնել 300 000 /երեք հարյուր հազար/ դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

		Կողմ-5	Դեմ-0	Ձեռնպահ-0
Աշոտ Կարոյան	կողմ	----------	----------	----------
Ռաֆիկ Հարությունյան	կողմ	----------	----------	----------
Անդրանիկ Վարդանյան	կողմ	----------	----------	----------
Գնել Վարդանյան	կողմ	----------	----------	----------
Արմեն Տեփանոսյան	կողմ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲՅԱՆ

«14» մարտի 2019 թվական
Անուշավան համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 8-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐՎԵԼԻՔ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

1. Գաբրիելյան Մագդա Սամվելի	- 40 000դրամ
2. Կարապետյան Անի Գեյիմի	- 40 000դրամ
3. Սարգսյան Անուշ Մերուժանի	- 40 000դրամ
4. Հովհաննիսյան Նելի Գերասիմի	- 40 000դրամ
5. Բաբայան Սվետլանա Սերյոժայի	- 30 000դրամ
6. Ղահրամանյան Արևիկ Միխաիլի	- 30 000դրամ
7. Սարգսյան Աննա Հենրիկի	- 30 000դրամ
8. Թորոսյան Խոսրովուհի Խաչիկի	- 30 000դրամ
9. Հովհաննիսյան Ջուլետա Տեփանոսի	- 20 000դրամ
Ընդամենը	- 300 000դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9-Ա

14 մարտի 2019թվական Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5 -րդ կետի դրույթով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Սահմանել գույքահարկի և հողի հարկի արտոնություն՝ զիջել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի բնակիչներ Արցախյան պատերազմի մասնակիցներ

1. Սերյոժա Վիլիեմի Ղահրամանյանին /առաջին խմբի հաշմանդամ/ պատկանող փոխադրամիջոցի 7700 դրամ գույքահարկը, ինչպես նաև 8000 դրամ հողի հարկը,
2. Ռաֆիկ Շիրինի Հարությունյանի 7300 դրամ հողի հարկը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

		Կողմ-4	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ա. Կարոյան	կողմ	----------	----------	----------
Ա. Վարդանյան	կողմ	----------	----------	----------
Գ. Վարդանյան	կողմ	----------	----------	----------
Ա. Տեփանոսյան	կողմ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՐՎԱՆԴ ՀԱԿՈԲՅԱՆ

«14» մարտի 2019 թվական
Անուշավան համայնք

(կազմված է 14.03.2019թ. և բաղկացած է 8 թերթից)

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անուշավան համայնքի
ավագանու 14.03.2019թ. թիվ 6-Ա որոշմամբ

Անուշավան համայնքի ղեկավար՝

_____ Ե. Հակոբյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
"_____"_____20___ թ.

գրանցման համար՝ _____

ՀՎՀՀ՝ _____

աշխատակից՝

_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզ, գ. Անուշավան 2019թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ հաստատություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

Հաստատության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

Հայերեն կրճատ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ

Ռուսերեն լրիվ՝ РЕСПУБЛИКА АРМЕНИА МАРЗ ШИРАК «АНУШАВАНСКАЯ ШКОЛА ИСКУСТВ» ОБШИННАЯ НЕКОМЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ,

Ռուսերեն կրճատ՝ «АНУШАВАНСКАЯ ШКОЛА ИСКУСТВ» ОНКО.

Անգլերեն լրիվ՝ REPUBLIC OF ARMENIA MARZ OF SHIRAK «ANUSHAVAN ART SCHOOL» COMMUNITY NON-COMMERCIAL ORGANIZATION.

Անգլերեն կրճատ՝ REPUBLIC OF ARMENIA MARZ OF SHIRAK «ANUSHAVAN ART SCHOOL» CNCO

Հաստատության հիմնադիրը ՀՀ Շիրակի մարզի Անուշավան համայնքն է /այսուհետ՝ հիմնադիր/, որի անունից հանդես է գալիս ՀՀ Շիրակի մարզի Անուշավան համայնքի ղեկավարը:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Հաստատության գտնվելու վայրն է 3008 ՀՀ Շիրակի մարզ, գ.Անուշավան, 1 փողոց, շենք 2:
Հաստատության հիմնադրի գտնվելու վայրն է 3008 ՀՀ Շիրակի մարզ, գ.Անուշավան, 1 փողոց, շենք 2:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ. կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Հաստատության գործունեության առարկան և նպատակները սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար

պայմաններ ստեղծելն է, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների գեղագիտական, ֆիզիկական զարգացումը, ռազմահայրենասիրական դաստիարակությունը և բնապահպանական ու կիրառական գիտելիքների ձևավորումը:

11. Հաստատությունն ապահովում է դպրոցականների նախասիրությունների, ունակությունների զարգացումը, երեխաների առողջության պահպանումն ու ամրապնդումը և վարքի շեղումների կանխարգելումը:

12. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային ու համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

13. Հաստատության հիմնական խնդիրներն են՝

ա) մինչև 18 տարեկան սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական, բնապահպանական և ֆիզիկական դաստիարակության ապահովումը՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները, հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները.

բ) մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

գ) սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպումը, արդյունավետ պայմանների ապահովումը.

դ) դպրոցում ստացած գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը, նրանց կարողությունների ու հմտությունների և ձեռներեցության զարգացումը,

ե) համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը:

14. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

ա) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում,

բ) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,

գ) ճամբարների կազմակերպում,

դ) հրաձգարանների գործունեություն, սպորտային միջոցառումների կազմակերպման և աջակցման գործունեություն,

ե) ներկայացումների, համերգների կազմակերպում և կրթական գործունեության այլ տեսակներ:

Հաստատությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

15. Հաստատություններն իրենց ուղղություններին համապատասխան իրականացնում են կրթադաստիարակչական ծրագրեր՝ համաձայն իրենց կանոնադրության: Ըստ կրթադաստիարակչական ծրագրերի՝ սահմանվում են հաստատության հետևյալ գործունեության տեսակները՝

ա) մանկապատանեկան ստեղծագործական,

բ) գեղագիտական,

գ) երաժշտական, նկարչական, գեղարվեստի, կերպարվեստի,

դ) լրացուցիչ կրթություն և արտադպրոցական դաստիարակություն:

16. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և ժամանակացույցին համապատասխան:

17. Հաստատությունը մշակում է գործունեության իր ծրագրերը՝ հաշվի առնելով սաների հետաքրքրություններն ու հակումները, ընտանիքի և կրթական համակարգի պահանջները:

18. Սաներն ընդգրկվում են հաստատության նույն կամ տարբեր տարիքի միավորումներում (խմբակ, ստուդիա, ակումբ, համույթ, թատրոն, մարզական խումբ և այլն): Յուրաքանչյուր սան իրավունք ունի ընդգրկվելու տարբեր միավորումներում:

19. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող բոլոր միավորումներում պարապմունքները պետք է լինեն շաբաթական 2-3 անգամ, ընդ որում, յուրաքանչյուր միավորումում պետք է ընդգրկվի առնվազն 7-12 երեխա:

20. Հաստատությունը գործում է ամբողջ տարվա ընթացքում: Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Հաստատությունում սահմանվում է վեցօրյա ուսումնական շաբաթ՝ ըստ ուսումնական պլանի:

IV. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

21. Հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:

22. Հաստատության կրթադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ:

Մանկավարժական խորհուրդն իր լիազորության սահմաններում քննարկում և առաջարկություններ է ներկայացնում՝

ա) հաստատության կանոնադրության վերաբերյալ.

բ) հաստատության գործունեության հիմնական ուղղությունների և կրթական ծրագրերի, առաջադրված խնդիրների իրականացման ձևերի ու միջոցների վերաբերյալ.

գ) ուսումնական պլանների ու ծրագրերի վերաբերյալ՝ ելնելով հաստատության հիմնական խնդիրներից, նպատակներից, կադրային և նյութական հնարավորություններից, սաների ու նրանց ծնողների հետաքրքրություններից.

դ) լրացուցիչ կրթական ծրագրերի և առաջավոր փորձի տարածման վերաբերյալ.

ե) մանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և խրախուսման վերաբերյալ:

Հաստատության մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են մանկավարժական աշխատողները: Մանկավարժական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև հիմնադրի և ծնողական համայնքի ներկայացուցիչներ:

Մանկավարժական խորհրդի նիստը հրավիրվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ:

Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Մանկավարժական խորհրդի նիստերը նախագահում է հաստատության տնօրենը:

23. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

24. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) հաստատության հիմնադրումը.

բ) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) հաստատության օրինակելի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

դ) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

25. Հաստատության տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների

սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի՝ պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

26. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.

բ) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

դ) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

ե) աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

է) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

ը) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմնի հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

27. Տնօրենի բացակայության դեպքում, լիազորված մարմնի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

28. Հաստատության տնօրենի՝ ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը՝

ա) պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների մակարդակի համար.

բ) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

գ) հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ.

դ) ընդհանրացնում և տարածում է լավագույն խմբակավարների աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.

ե) ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը.

զ) կազմակերպում է սովորողների հանգիստը և ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցուցաբերելու համար:

29. Հաստատության տնօրենի՝ տնտեսական աշխատանքի գծով տեղակալը՝

ա) պատասխանատու է հաստատության շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, հաստատության սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, հաստատության ուսումնական պարապմունքներին՝ դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

բ) միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար:

30. Խմբակի ղեկավարը (խմբակավարը)՝

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում իր խմբակի սաների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս խմբակավարների հետ.

բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնությունը.

գ) իրականացնում է խմբակի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ.

դ) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ.

ե) արգելում է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են սաների առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

31. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

32. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

33. Հիմնադիրը՝ սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

34. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

35. Հաստատության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

36. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

37. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

38. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

39. Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադիրի բյուջեով նախատեսված միջոցների հաշվին , Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

40. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վճարովի կրթադաստիարակչական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

41. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման):

42. Հաստատությունը շահույթը նպատակաուղղում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

43. Հաստատությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

44. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները որպես կանոն մինչև 18 տարեկան սաներն են, նրանց ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

45. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել հաստատության կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են մանկապատանեկան հաստատության գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու հաստատության ներքին կարգապահական կանոններով:

46. Սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են հաստատության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

47. Հաստատության անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է նրա կանոնադրությամբ:

48. Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր, ըստ մասնագիտության, ունեն անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

49. Հաստատության մանկավարժն իրավունք ունի մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

50. Հաստատության մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

51. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը:

52. Հաստատությունում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

53. Սանը պարտավոր է՝

բարեխղճորեն սովորել,

խնամքով վերաբերվել հաստատության գույքին,

հարգել հաստատության սաների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը,

պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:

54. Հաստատության երեխաների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

55. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

56. Հաստատության լուծարման դեպքում հաստատության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

Հավելված թիվ 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անուշավան համայնքի ղեկավարի 2019թվականի
մարտի 6-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի «Անուշավանի արվեստի դպրոց» համայնքային
ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին»
թիվ 16/1-Ա որոշման

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.03.2019Թ.
ԹԻՎ 16/1-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
_____Ե.ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ»
համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը /գ. Անուշավան փ1, շ2/ փոխանցվող
/անժամկետ և անհատույց իրավունքով/, Անուշավան համայնքին սեփականության իրավունքով
պատկանող գույքի ցանկ

h/h	անվանումը	քանակ	Սկզբնական արժեք /հազար դրամ/	Մաշվածություն /հազար դրամ/	Մնացորդային արժեք /հազար դրամ/
1	Անուշավանի համայնքային սեփականություն /120քմ/	1	1536.1	0	1536.1
	ընդամենը	1	1536.1	0	1536.1